

ՆԿԻՐԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ

Բահաուլլա

© Հայաստանի Բահայիների Ազգային Հոգևոր Ժողով

Թարգմանություն անգլերենից, 2006

ISBN 5-93283-009-3

THE HIDDEN WORDS

Baha'u'llah

Wilmette, Illinois, Baha'í Publishing Trust, 1990

ՆՎԻՐԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ

Մաս I

(արաբերենից)

ՆԱ ԱՄԵՆԱՓԱՌԱՊԱՆԾ ՓԱՌՔՆ Է

Այս իջել էր փառքի արքայությունից՝ ասված զորավորության և ուժի լեզվով, և հայտնված էր հին անցյալ ժամանակների Մարգարեներին: Մենք վերցրինք սրա նվիրական էությունը և պատեցինք այն համառոտության հանդերձով՝ որպես առաքինիների հանդեպ ողորմածության նշան, որպեսզի նրանք հավատարիմ լինեն Աստծու Կտակին, իրենց կյանքով արդարացնեն Նրա վստահությունը և ոգու արքայությունում ձեռք բերեն Աստվածային առաքինության փայլաքար:

1. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Իմ առաջին խորհուրդն այսպիսին է՝ ունեցիր մաքուր, սիրող, լուսավայլ սիրտ և կհասնես հավիտենական, հավերժական, անսահման թագավորության:

2. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Իմ աչքերում ամենասիրած բանն արդարությունն է: Մի շրջվիր դրանից, եթե ձգտում ես դեպի Ինձ և մի արհամարհիր այն, որպեսզի ես կարողանամ վստահել քեզ: Դրա օգնությամբ կտեսնես քո աչքերով և ոչ ուրիշի, կճանաչես քո ընթրնումով և ոչ մերձավորի: Խորհիր այդ մասին քո սրտում, ինչպես պատշաճ է քեզ: Հիրավի, արդարությունն Իմ նվերն է քեզ և Իմ քնքուշ խնամքի նշանը: Ուրեմն, գետեղիր այն քո աչքերի առջև:

3. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Լինելով գաղտնի Իմ անհիշելի գոյության և Իմ էության հավիտենականության մեջ՝ ճանաչեցի ես Իմ սերը քո հանդեպ և այդ պատճառով ստեղծեցի ես քեզ, դրոշմեցի քո վրա Իմ պատկերը և բացահայտեցի քեզ Իմ գեղեցկությունը:

4. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Ես սիրեցի քո ստեղծումը, այդ պատճառով ես ստեղծեցի քեզ: Ուստի, սիրիր Ինձ, որպեսզի ես հիշատակեմ քո անունը և կյանքի ոգով լցնեմ քո հոգին:

5. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Սիրիր Ինձ, որպեսզի ես կարողանամ սիրել քեզ: Եթե չսիրես Ինձ, քեզ երբեք չի հասնի Իմ սերը: Գիտցի՛ր այս, ո՛վ, ծառա:

6. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Քո Դրախտը Իմ սերն է, քո երկնային կացարանը վերամիավորումն է Իմ հետ: Ուրեմն, մտիր այնտեղ ու մի հապաղիր: Այս է նախանշված քեզ Մեր երկնային արքայությունում և Մեր վեհ Տիրույթում:

7. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Եթե սիրում ես Ինձ, թեքվիր ինքդ քեզանից և եթե փնտրում ես Ինձ համար հաճելին, հրաժարվիր ինքդ քեզ սիրաշահելուց, որպեսզի դու մեռնես Իմ մեջ, իսկ ես ապրեմ քո մեջ հավերժ:

8. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Դու հանգստություն չես գտնի, մինչև չհրաժարվես քեզանից և չդառնաս դեպի Ինձ, քանզի դու պետք է փառաբանվես հանուն Իմ անվան, այլ ոչ՝ քո և հույս դնես Իմ վրա, այլ ոչ՝ քո, որովհետև Ինձ ցանկալի է, որպեսզի միայն Ինձ սիրեն ամեն գոյից ավելի:

9. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Իմ սերն Իմ պատվարն է: Այնտեղ մտնողը պաշտպանված է և ապահով, իսկ դրանից թեքվողը անպայման ճանապարհից կշեղվի և կզոհվի:

10. Ո՛Վ, ԱՍՈՒՅԹԻ ՈՐԴԻ:

Դու իմ պատվարն ես, մտիր այնտեղ և ապահով կլինես: Իմ սերը քո մեջ է, ճանաչիր այն և ինձ քո կողքին կտեսնես:

11. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Դու իմ ջահն ես և իմ լույսը քո մեջ է: Շողշողա այդ լույսից և այլ բան մի փնտրիր ինձանից բացի: Չէ՞ որ ես քեզ հարուստ ստեղծեցի և քեզ վրա առատորեն զեղեցի իմ բարեհաճությունը:

12. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Իշխանության աջով ես քեզ ստեղծեցի և ուժի մատներով արարեցի քեզ, քո մեջ դրեցի ես իմ լույսի էությունը: Գոհացիր դրանով և մի փնտրիր այլ բան, քանզի իմ ստեղծածը կատարյալ է և իմ պատվիրանը անխախտելի: Համոզվիր դրանում և կասկածի մի ենթարկիր այդ:

13. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Ես քեզ հարուստ ստեղծեցի, ինչու՞ ես դու ընկնում աղքատության մեջ: Ես քեզ վեհանձն ստեղծեցի, ինչու՞ ես դու քեզ նվաստացնում: Գիտելիքի բուն էությունից ես քեզ ստեղծեցի, ինչու՞ ես դու ինձանից բացի ուրիշ գիտելիք փնտրում: Ես քեզ սիրո կավից կերտեցի, ինչպե՞ս ես դու զբաղված ուրիշով: Հայացքդ ուղղիր քո ներսը և կտեսնես, թե ինչպես եմ ես կենում քո մեջ՝ ուժեղ, զորեղ, ինքնագո:

14. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Դու իմ տիրույթն ես, իսկ իմ տիրույթն անվերջ է, ուրեմն, ինչու՞ ես դու վախենում քո վախճանից: Դու իմ լույսն ես, իսկ իմ լույսն անմար է, ուրեմն, ինչու՞ է քեզ սարսափեցնում քո մարումը: Դու իմ փառքն ես, իսկ իմ փառքը խամրող չէ: Դու իմ հանդերձն ես, իսկ իմ հանդերձը մաշվող չէ: Ապրիր՝ ինձ սիրելով և կզուգես ինձ փառքի արքայությունում:

15. ՈՐՎ, ԱՍՈՒՅԹԻ ՈՐՂԻ:

Շրջիր դեմքդ դեպի Իմ դեմքը և հրաժարվիր ամեն ինչից, բացի Ինձանից, քանզի Իմ իշխանությունը կմնա և Իմ արքայությունը չի զոհվի հավիտյան: Իսկ եթե սկսես փնտրել մեկ ուրիշի Ինձանից բացի, անգամ հավերժ փնտրես դու Տիեզերքում, զուր կլինի այդ:

16. ՈՐՎ, ԼՈՒՅՍԻ ՈՐՂԻ:

Մոռացիր ամեն ինչի մասին, բացի Ինձանից և հաղորդակցվիր Իմ ոգուն: Ահա Իմ պատվիրանի բուն էությունը, ուրեմն, դիմիր դրան:

17. ՈՐՎ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐՂԻ:

Գոհացիր ինձանով և մի փնտրիր այլ օգնական: Քանզի, բացի Ինձանից հավիտյան ոչ ոք քեզ լիովին չի գոհացնի:

18. ՈՐՎ, ՈԳՈՒ ՈՐՂԻ:

Մի խնդրիր Ինձանից այն, ինչ Մենք չենք ցանկանում քեզ համար և գոհացիր այն բանով, ինչ Մենք քեզ նախատեսել ենք, չէ՞ որ դրանով գոհանալը քո բարօրությունն է :

19. ՈՐՎ ՀՐԱՇԱԼԻ ՏԵՍԻԼՔԻ ՈՐՂԻՆԵՐ:

Ես ներշնչեցի քո մեջ Իմ ոգուց, որպեսզի դու Ինձ սիրես: Ուրեմն, ինչու՞ ես դու Ինձ լքում և այլ սիրեցյալ փնտրում:

20. ՈՐՎ, ՈԳՈՒ ՈՐՂԻ:

Իմ իրավունքը քո վրա մեծ է և հավերժահիշատակ: Իմ ողորմածությունը քո հանդեպ առատ է և ակնհայտ: Իմ սերն իր բույնն է հյուսել քո մեջ և այն թաքուն չէ: Իմ լույսը հայտնվել է քեզ, և այն անխավար է:

21. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Քեզ եմ նախասահմանել Ես լուսաշող փառքի ծառից ընտրագույն պտուղները, ուրեմն ինչու՞ դու հրաժարվեցիր դրանցից և գոհացար նվազ բարօրությամբ: Ուրեմն, վերադարձիր այն ամենին, ինչը քեզ համար ավելի լավ է երկնային արքայությունում:

22. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Ես քեզ ազնիվ ստեղծեցի, իսկ դու քեզ նվաստացրիր: Ուրեմն, բարձրացիր այն բանին, ինչի համար դու ստեղծվել էիր:

23. Ո՛Վ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆԻ ՈՐԴԻ:

Ես քեզ կանչում եմ հավիտենականին, իսկ դու ձգտում ես անցավորին: Ի՞նչն է քեզ հեռացնում Մեզ ցանկալիից և ձգում քեզ ցանկալիին:

24. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Մի անցիր քո սահմանները և մի հավակնիր այն բանին, ինչը քեզ վայել չէ: Երեսն ի վայր ընկիր քո Աստծու առջև՝ զորավորության և ուժի Աստծու:

25. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Մի բարձրացիր աղքատի առջև, քանզի Ես եմ ուղղում նրա ոտքերը և տեսնում եմ, թե ինչպես ես դու մնում չարի մեջ և ես քեզ կվանեն Ինձանից հավիտյան:

26. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Ինչպե՞ս դու կարող էիր մոռանալ քո արատները և մտահոգվել ուրիշների արատներով: Ով այդպես է վարվում, նա նզովված է Իմ կողմից:

27. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Մի հիշատակիր ուրիշների մեղքերը, քանի դեռ ինքդ ես մեղավոր: Եթե խախտես այս պատվիրանը, կնզովվես, և Ես եմ դրա վկան:

28. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Հիրավի, գիտցիր՝ ով մարդկանց արդարության է կոչում, իսկ ինքն անարդարություն գործում, նա Ինձանից չէ, անգամ Իմ անունը կրի:

29. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Ոչ մի հոգու մի վերագրիր այն, ինչ չէիր ցանկանա, որ քեզ վերագրեին և մի ասա այն, ինչ չես անում: Ահա Իմ պատվիրանը քեզ, կատարիր այն:

30. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Մի մերժիր Իմ ծառային, եթե նա քեզանից ինչ-որ բան խնդրի, քանզի նրա դեմքն Իմ դեմքն է. ուրեմն, շվարիր Իմ առջև:

31. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Ամեն օր ինքդ քեզ հաշիվ տուր, նախքան քեզ պատասխանի կկանչեն, քանզի մահը քեզ մոտ կգա հանկարծակի և քո գործերի համար քեզանից հաշիվ կպահանջեն:

32. Ո՛Վ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆԻ ՈՐԴԻ:

Ես քեզ համար մահը դարձրի ուրախության բանբեր: Ինչու՞ ես դու տխրում: Ես հրամայեցի աշխարհին քո վրա զեղել իր փայլը: Ինչու՞ ես դու ծածկվում:

33. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Աշխարհի բարի լուրով եմ ես ողջունում քեզ. ուրեմն, ուրախացիր: Սրբության արքունիքի մոտ եմ ես կանչում քեզ՝ մնա այնտեղ և հավիտյան հանգստություն կգտնես:

34. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Սրբության ոգին քեզ ավետում է վերամիավորման ուրախությունը, ուրեմն ինչու՞ ես դու տխրում: Իշխանության ոգին ամրապնդում է քեզ Նրա գործում, ուրեմն, ինչու՞ ես դու

ծածկվում: Նրա դեմքի լույսն ուղեկցում է քեզ, ուրեմն, ինչպե՞ս դու կարող ես ճանապարհից շեղվել:

35. Ո՛ւ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Մի ափսոսա ոչ մի բանի համար՝ միայն Մեզանից հեռանալու համար: Մի ուրախացիր ոչնչով՝ միայն քո մոտենալով և վերադառնալով դեպի Մեզ:

36. Ո՛ւ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Քո սրտի ուրախությամբ ուրախացիր և կարժանանաս Իմ հետ հանդիպմանը ու կարտացոլես Իմ գեղեցկությունը:

37. Ո՛ւ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Մի պոկիր քո վրայից Իմ հոյակապ զգեստը և մի կորցրու Իմ հրաշալի աղբյուրի քո բաժինը, որպեսզի քեզ չտանջի անվերջ ծարավը:

38. Ո՛ւ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Իմ հանդեպ սիրուց ենթարկվիր Իմ օրենքներին և հրաժարվիր քո ցանկություններից, եթե փնտրում ես Իմ բարեհաճությունը:

39. Ո՛ւ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Մի արհամարհիր Իմ պատվիրանները, եթե սիրեցիր Իմ գեղեցկությունը, և մի մոռացիր Իմ հորդորանքները, եթե ցանկանում ես Իմ բարեհաճությունը:

40. Ո՛ւ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Անգամ եթե դու թռչես ամբողջ Տիեզերքով և անցնես երկնային տարածքները, դու ոչ մի բանում հանգստություն չես գտնի, բացի Մեր հրամանը լսելուց և Մեր դեմքի առջև խոնարհ լինելուց:

41. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Փառաբանիր Իմ գործը, որպեսզի Ես կարողանամ բացել քո առջև Իմ մեծության գաղտնիքները և լուսավորեմ քեզ հավերժության լույսով:

42. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Հնազանդվիր Իմ առաջ, որպեսզի Ես ողորմաժաբար բարեհաճեմ քեզ, եղիր Իմ գործին պաշտպան, որպեսզի դու դեռ երկրի վրա հաղթող դառնաս:

43. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Հիշատակիր Ինձ Իմ երկրի վրա, որպեսզի Ես հիշատակեմ քեզ Իմ երկնքներում. դրանով կմխիթարվեն Իմ աչքերը և քո աչքերը:

44. Ո՛Վ, ԳՈՀԻ ՈՐԴԻ:

Քո լսողությունն Իմ լսողությունն է, ականջ դիր դրանց: Քո հայացքն Իմ հայացքն է, տես դրանք, որպեսզի քո նվիրական էության մեջ դու վկայես Իմ վեհ սրբության մասին, իսկ Ես Ինքս Իմ մեջ վկայեմ քո բարձր կոչման մասին:

45. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Իմ ճանապարհին տանջալից մահ փնտրիր՝ գոհանալով Իմ կամքով և շնորհակալ լինելով Իմ նախանշածի համար և կհանգչես Իմ հետ մեծության կամարների տակ, փառքի խորանին:

46. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Մտորիր և խորհիր՝ դու ուզում ես մեռնել քո մահձին, թե՞ քո արյունով շաղախելով աճյունը, ընդունել մարտիրոսությունն Իմ ճանապարհին և բարձրագույն դրախտում

դառնալ իմ կամքի արտահայտումը և իմ լույսի մարմնավորումը: Ուրեմն, արդար վճռիր, ո՞վ, ծառա:

47. Ո՞վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Երդվում եմ իմ գեղեցկությամբ: Եթե քո մազերը ներկվեն արյունով, դա իմ աչքերում ավելի բարձր է, քան Տիեզերքի ստեղծումը և երկու աշխարհների փայլը: Ուրեմն, ձգտիր հասնել դրան, ո՞վ, ծառա:

48. Ո՞վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Ամեն մի իրին՝ իր նշանը: Սիրո նշանը կայունությունն է այն բանում, ինչը նախանշել եմ ես և համբերությունն է իմ փորձություններում:

49. Ո՞վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Իսկական սիրողը ձգտում է փորձության, ինչպես խռովարարը փափագում է ներողամտություն, իսկ մեղսագործը՝ գթասրտություն:

50. Ո՞վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Եթե իմ ճանապարհին քեզ չպատահեն աղետներ, ապա ինչպե՞ս կկարողանաս դու հետևել նրանց ուղիներով, ով գոհացավ իմ կամքով: Եթե դու, հուսալով իմ հետ հանդիպել, ձախորդությունների չհանդիպես, ապա ինչպե՞ս դու լույս կգտնես իմ գեղեցկության հանդեպ քո սիրո մեջ:

51. Ո՞վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Իմ նախախնամությունը իմ ձախորդություններն են. տեսանելիությամբ դրանք կրակ ու պատիժ են, բայց դրանցում թաքնված են լույսն ու գթասրտությունը: Ուրեմն, շտապիր

դրանց մոտ, որպեսզի դու դառնաս հավերժական լույս և անմահ ոգի: Ահա Իմ պատվիրանը քեզ, հետևիր դրան:

52. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Եթե քեզ բարեկեցություն վիճակվի, մի ուրախացիր, իսկ եթե բաժին ընկնի նվաստացում, մի տխրիր, քանզի և՛ մեկը, և՛ մյուսը կանցնեն ու հավետ կվերանան:

53. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Եթե քեզ աղքատություն վիճակվի, մի տխրիր, քանզի ժամանակին քեզ կայցելի հարստությունների Տիրակալը: ԵՎ նվաստացումից մի սարսափիր, քանզի մի անգամ փառքը կհամակի քեզ:

54. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Եթե ձգտել ես դու այս հավերժական, անանց տիրակալությանը և այս նախահավիտենական, անանցողիկ կյանքին, հրաժարվիր այս մահկանացու և կարճատև տիրակալությունից:

55. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Մի հրապուրվիր այս աշխարհով, քանզի կրակով ենք Մենք փորձարկում ոսկին, իսկ ոսկով փորձում ենք Մեր ծառաներին:

56. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Դու ոսկի ես ցանկանում, իսկ Ես ուզում եմ քո ազատումը դրանից: Դրանում ես դու ենթադրում քո հարստությունը, իսկ Ես հարստություն եմ համարում քո մաքրումը դրանից: Իմ կյանքով եմ երդվում: Այս է Իմ գիտելիքը, իսկ այն՝ քո երա՛զանքը. ուրեմն, ինչպե՞ս կարող է Իմ ճանապարհը հանդիպել քոնին:

57. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Իմ հարստությամբ շնորհիք իմ աղքատներին, որպեսզի երկնքներում քաղես հավիտենական շքեղության պահեստատներից և անանց փառքի գանձատներից: Բայց իմ կյանքով եմ երդվում: Սրանից ավելի արժանին ոգու զոհաբերությունն է, եթե դու դիտես իմ աչքերով:

58. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Գոյության տաճարն իմ գահն է. մաքրիր այն ամեն մի բանից, և Ես կհաստատվեմ այնտեղ ու կկենամ:

59. Ո՛Վ, ԳՈՅԻ ՈՐԴԻ:

Քո սիրտն իմ կացարանն է. օժիր այն իմ գալուստի համար: Քո ոգին իմ հայտնության վայրն է. մաքրիր այն իմ հայտնվելու համար:

60. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Ձեռքդ դիր իմ ծոցը, որպեսզի Ես ճաճանչով և փայլով քեզանից վեր բարձրանամ:

61. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Բարձրացիր իմ երկնքերը և վերամիավորման ուրախություն կգտնես ու անանց փառքի գավաթից աննման գինի կճաշակես:

62. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Անցնում եմ քո օրերն, իսկ դու դեռ անձնատուր ես լինում մտացածին բաներին և ունայն երազանքներին: Մինչև ե՞րբ դու պետք է ննջես քո մահճի վրա: Բարձրացրու գլուխդ քնից, քանզի Արևն արդեն բարձրացել է մինչև բարձրագույն գիծը և, միգուցե այն լուսավորի քեզ գեղեցկության լույսով:

63. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Լույսը քեզ լուսավորեց սուրբ Լեռան տեսադաշտից, և գիտելիքի ոգին փչեց քո սրտի Սինայը: Ուրեմն, ազատվիր զուր երազանքների քողերից ու հայտնվիր Իմ արքունիքում և կարժանանաս հավերժական կյանքի ու Իմ հետ տեսակցության: Այդժամ քեզ բաժին չեն ընկնի ո՛չ մահը, ո՛չ վիշտը, ո՛չ ուժասպառությունը:

64. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Իմ հավերժությունն Իմ ստեղծածն է, Ես ստեղծեցի այն քեզ համար: Այն դարձրու քո տաճարի ծածկոցը: Ին միասնությունն Իմ ստեղծածն է, Ես ստեղծեցի այն քո համար. զգեստավորվիր դրանով, որպեսզի Իմ անանց գոյությունը հայտնես հավիտյանս հավիտենից:

65. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Իմ մեծությունն Իմ պարզն է քեզ, իսկ Իմ շքեղությունը քո հանդեպ Իմ ողորմածության նշանն է: Այն, ինչ ինձ վայել է, ոչ ոք չի ըմբռնի և ոչ ոք չի արտահայտի: Հիրավի, Ես պահպանեցի այս Իմ գաղտնի պահեստարաններում և Իմ կամքի գանձարաններում՝ Իմ ծառաների հանդեպ սիրուց և Իմ ժողովրդի հանդեպ ողորմածությունից:

66. Ո՛Վ, ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՎ ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԷՈՒԹՅԱՆ ԶԱՎԱԿՆԵՐ:

Ձեզ արգելում են սիրել Ինձ, և հոգիները կշփոթվեն Իմ մասին հիշատակելիս: Քանզի մարդկային ուղեղները չեն ըմբռնի Ինձ, և սրտերը չեն պարփակի:

67. Ո՛Վ, ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՈՐԴԻ:

Երդվում եմ Իմ ոգով և Իմ բարեհաճությամբ: Երդվում եմ Իմ ողորմածությամբ և Իմ գեղեցկությամբ: Այն ամենը, ինչ Ես քեզ բացահայտեցի զորավորության լեզվով և գծեցի քեզ համար հզորության գրչով, համապատասխան է քո շտեմարանին և քո հասկացողությանը և ոչ Իմ արժանապատվությանը և Իմ ձայնի մեղեդուն:

68. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՎԱԿՆԵՐ:

Արդյո՞ք դուք գիտեք, թե ինչու ենք Մենք ձեզ ստեղծել ընդհանուր հող ու մոխրից: Որպեսզի ոչ ոք չմեծարվի մյուսի առջև: Ամեն պահի ձեր սրտերում մտորեք այն մասին, թե ինչպես եք դուք ստեղծվել: Քանի որ Մենք ստեղծեցինք ձեզ միևնույն նյութից, դուք պետք է լինեք որպես մի հոգի, քայլեք նույն քայլով, ճաշակեք նույն շուրթերով և կենաք նույն երկրում, որպեսզի ձեր նվիրական էությունից ձեր գործերով և արարքներով երևացնեք միասնության նշանները և օտարացման բուն էությունը: Ահա իմ խորհուրդը ձեզ, ո՛վ, լուսաշողների կաճառ: Լսեք այս խորհուրդը և կգուգեք սրբության պտուղները հրաշալի փառքի ծառից:

69. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻՆԵՐ:

Դուք իմ գանձարանն եք, քանզի ձեր մեջ են Ես ամփոփել իմ գաղտնիքների գոհարները և իմ գիտելիքի ակնեղենը: Պահպանեք դրանք օտարներից իմ ծառաների միջև և անօրեններից՝ իմ ժողովրդի միջև:

70. Ո՛Վ, ՈՐԴԻ ՆՐԱ, ՈՎ ԻՐ ԷՈՒԹՅԱՄԲ ԿԵՆՈՒՄ ԷՐ ԻՆՔՆ ԻՐ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ:

Գիտցիր, որ ես քեզ պատեցի սրբության բոլոր բուրմունքներով, լիակատար չափով բացահայտեցի քեզ իմ խոսքը, քո միջոցով կատարեցի իմ վերին օգնությունը և ցանկացա քեզ համար այն, ինչ ցանկանում էի ինձ համար: Ուրեմն, գոհացիր իմ բարեհաճությամբ և շնորհակալ եղիր ինձ:

71. Ո՛Վ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԴԻ:

Գրիր այն ամենն, ինչ մենք բացահայտեցինք քեզ լույսի թանաքով քո ոգու հուշատախտակում: Եթե դա քո ուժերից վեր է, պատրաստիր թանաքը քո սրտի բուն էությունից: Եթե չկարողանաս կատարել այդ, գրիր այն ալ թանաքներով, որ թափվել են իմ ճանապարհին: Հիրավի, այս առավել թանկ է ինձ, թող կենա դրանց լույսը հավիտյան:

ՆՎԻՐԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ

Մաս II

(պարսկերենից)

Հանուն Ասույթի Տիրոջ՝ Ջորավորի

1. Ո՛Վ ՄԱՐԴԻԿ, ՈՐ ՈՒՆԵՔ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՎ ԱԿԱՆՁՆԵՐ ԼՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Սիրեցյալի առաջին կանչն այսպիսին է. «Ո՛վ, խորհրդավոր սոխակ: Մի կեցիր ոչ մի տեղ, բացի ոգու վարդագույն այգուց: Ո՛վ, սիրո Սողոմոնի պատգամաբեր: Մի փնտրիր այլ ապաստան, բացի սիրեցյալի արքայությունից՝ Սավյան երկրից: Ո՛վ, անմահ Փյունիկ: Մի բնակվիր ոչ մի տեղ, բացի հավատարմության գագաթից: Այնտեղ է քո կացարանը, եթե քո հոգու թևերով ձախրես անսահմանի արքայություն և փորձես հասնել քո նպատակին»:

2. Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Թռչունը ձգտում է իր բույնին, սոխակը՝ վարդի հմայքին, իսկ մարդկային սրտերի թռչունները հեռացան իրենց հավերժական բույնից՝ գոհանալով մահկանացու հողով և զրկվեցին աստվածային ներկայության փառքից՝ դարձնելով հայացքները դեպի անփութության ճահճուտը: Ավա՛ղ: Որքան տարօրինակ և ափսոսալի է այս. նրանք երես թեքեցին Ամենաբարձրյալի ալեկոծվող ծովերից՝ հանուն չնչին գավաթի և մնացին ամենալուսաշող տեսադաշտից հեռու:

3. Ո՛Վ, ԲԱՐԵԿԱՄ:

Քո սրտի այգում տնկիր միայն սիրո վարդեր և ձեռքիցդ բաց մի թող կապվածության և ցանկության սոխակին: Գնահատիր առաքինիների հասարակությունը և խուսափիր անօրենների բարեկամությունից:

4. Ո՛Վ, ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԴԻ:

Ու՞ր ուղևորվի սիրողը, եթե ոչ իր սիրեցյալի երկիր: Եվ ինչպե՞ս հանգստանա փնտրողը՝ հեռու լինելով իր սրտի ցանկության առարկայից: Իսկական սիրողի համար կյանքը միավորման մեջ է, իսկ մահը՝ բաժանման: Նրա կրծքում չկա համբերություն, իսկ սրտում՝ հանգիստ: Նա կտար անհամար քանակությամբ կյանքեր՝ իր սիրեցյալի ապաստանը շտապելու համար:

5. Ո՛Վ, ՀՈՂԻ ՈՐԴԻ:

Ճշմարիտ եմ Ես ասում քեզ. Բոլոր մարդկանցից ամենաանհոգը նա է, ով մտնում է աննպատակ վեճի մեջ և ուզում է բարձրանալ իր եղբոր վրա: Ասա. ո՛վ, եղբայրակիցներ: Գործերը, այլ ոչ թե խոսքերը թող լինեն ձեր զարդը:

6. Ո՛Վ, ԵՐԿՐԻ ՈՐԴԻ:

Գիտցիր, հիրավի, որ այն սիրտը, որում պահպանվում է նախանձության գեթ փոքրագույն հետք, երբեք չի հասնի Իմ հավերժ տիրությանը և չի շնչի Իմ սրբազան արքայությունից փչող սրբության բուրմունքները:

7. Ո՛Վ, ՍԻՐՈ ՈՐԴԻ:

Գեթ մեկ քայլ է քեզ բաժանում փառավոր երկնային բարձունքներից և սիրո երկնային ծառից: Արա այդ քայլը, իսկ երկրորդով մուտք գործիր անմահական ապաստանը և մտիր հավերժության վրանը: Լսիր այն, ինչը հայտնած է փառքի գրչով:

8. Ո՛Վ, ՓԱՌՔԻ ՈՐԴԻ:

Սրբության ճանապարհին արագ եղիր և բարձրացիր Իմ հետ շփվելու երկնքներ: Փայլելու աստիճանի մաքրիր քո սիրտը ոգու ուժով և շտապիր դեպի Ամենաբարձրյալի արքունիքը:

9. Ո՛Վ, ԹՈՌԻՑԻԿ ՍՏՎԵՐ:

Հետևում թողիր կասկածի ցածրագույն աստիճանները և բարձրացիր վստահության երկնային բարձունքները: Բաց արա ճշմարտության աչքը և կտեսնես քողերից ազատված գեղեցկությունը և կբացականչես. օրինյալ եղիր Տեր՝ ամենագերազանցը արարիչներից:

10. Ո՛Վ, ԲԱՂՁԱՆՔԻ ՈՐՂԻ:

Լսիր այս. երբեք մահկանացու աչքը չի ճանաչի հավերժական գեղեցկությունը, և անկյանք սիրտը սփոփանք կգտնի միայն թոշնած ծաղկի մեջ: Քանզի նմանը ձգվում է նմանին և ուրախություն է գտնում սրտաբուխի հետ շփվելիս:

11. Ո՛Վ, ՀՈՂԻ ՈՐՂԻ:

Կուրացրու քո աչքերը, որպեսզի տեսնես Իմ գեղեցկությունը, փակիր քո ականջները, որպեսզի լսես Իմ ձայնի քաղցր մեղեդիները, ազատվիր ամեն տեսակի գիտունությունից, որպեսզի հաղորդակցվես Իմ գիտելիքին, հրաժարվիր հարստություններից, որպեսզի Իմ հավերժական հարստության օվկիանոսից մշտական բաժին ձեռք բերես: Եվ այսպես, կուրացրու քո աչքերը ամեն ինչի համար, բացի Իմ գեղեցկությունից, փակիր ականջներդ ամեն ինչի համար, բացի Իմ խոսքից, ազատվիր ամեն տեսակի գիտունությունից, բացի Իմ գիտելիքից, որպեսզի պարզ հայացքով, մաքուր սրտով և ուշադիր լսողությամբ մուտք գործես Իմ սրբության արքունիքը:

12. Ո՛Վ, ԵՐԿԱԿԻ ՏԵՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ:

Փակիր մի աչքը և բաց արա մյուսը: Փակիր մեկն՝ աշխարհի և նրա մեջ եղած ամեն գոյի վրա և բաց արա մյուսը՝ Սիրեցյալի ամենասուրբ գեղեցկության վրա:

13. Ո՛Վ, ԻՄ ԶԱՎԱԿՆԵՐ:

Վախենում եմ, որ այդպես էլ չլսելով երկնային աղավնյակի մնչունը, դուք կչքանաք բացարձակ կորստի խավարի մեջ և այդպես էլ չտեսնելով վարդի գեղեցկությունը՝ կվերադառնաք ջրի և կավի մեջ:

14.Ո՛Վ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ:

Մի լքեք հավերժական գեղեցկությունը անցողիկ գեղեցկության համար և մի կապվեք հողի այս մահկանացու աշխարհին:

15.Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐԴԻ:

Մոտենում է ժամը, երբ սրբության սոխակն այլևս չի հայտնի նվիրական գաղտնիքներ, և դուք բոլորդ կգրկվեք երկնային մեղեդուց ու վերուստ եկած ձայնից:

16.Ո՛Վ, ԱՆՓՈՒԹՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆ:

Խորհրդավոր լեզուների մեծ բազմություն է լսվում միակ ասույթում, և գաղտնի ճշմարտությունների անհամար հարստություն է հայտնած միակ մեղեդու մեջ: Սակայն, ավաղ, չկա ո՛չ ականջ լսելու համար, ո՛չ սիրտ՝ հասկանալու:

17.Ո՛Վ, ԸՆԿԵՐԱԿԻՑՆԵՐ:

Անսահմանի դարպասները լայն բացված են, և սիրեցյալի կացարանը զարդարված է սիրողների արյունով: Բայց բոլորը, բացի քչերից դեռ զրկված են այս երկնային քաղաքից և, անգամ, այս քչերի միջև գտնվեց սրտով մաքուրների և ոգով օծվածների գեթ մի բուռ:

18.Ո՛Վ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՐԱԽՏԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ:

Ազդարարեք համոզվածության զավակներին, որ սրբության տիրույթներում՝ չքնաղ դրախտի մոտ, ծագեց նոր այգի, որի շուրջ հավաքվեցին բարձրագույն արքայության և

վեհ դրախտի անմահ բնակիչները: Փութաջան եղեք և կհասնեք այս դիրքին և դրա հողմածաղիկներից կճանաչեք սիրո գաղտնիքները և դրա հավերժական պտուղներից կճաշակեք աստվածային ու կատարյալ իմաստունության գաղտնիքները: Իսկ նրանց աչքերը, ուրբեր մտան և այնտեղ են մնում, թող սփոփվեն:

19.Ո՛Վ, ԻՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ:

Միթե՞ մոռացել եք դուք այն իսկական և լուսաշող առավոտը, երբ այն սուրբ ու օրհնյալ վայրում դուք բոլորդ հավաքվեցիք Իմ առջև կյանքի ծառի հովանու տակ, որ աճում է ամենափառավոր դրախտում: Թրթիռով լեցուն դուք լսում էիք Ինձ, երբ Ես արտասանում էի երեք նվիրական ասույթները. «Ո՛վ, բարեկամներ: Ձեր կամքը մի նախընտրեք Իմինից, երբեք մի ցանկացեք, ինչ Ես չեմ ցանկացել ձեզ, մի մոտեցեք Ինձ աշխարհիկ կրթերով և տենչանքներով պղծված կենսագուրկ սրտերով»: Եթե մաքրեք ձեր հոգիները, այդժամ կհիշվի ձեզ այն վայրը և այն շրջապատը, և Իմ ասույթների ճշմարտությունը ակնհայտ կդառնա ձեզանից յուրաքանչյուրի համար:

Ամենասուրբ տողերից ութերորդում, Դրախտի հինգերորդ Հուշատախտակում Նա ասում է.

20.Ո՛Վ, ԴՈՒՔ, ՈՐ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՊԵՍ ՊԱՌԿԱԾ ԵՔ ԱՆՓՈԻԹՈՒԹՅԱՆ ՄԱՀՃԻՆ:

Անցնում են դարեր, և ձեր թանկագին կյանքերը մոտենում են ավարտին, բայց ձեզանից մաքրության ոչ մի շունչ չի հասել Մեր սրբության արքունիքը: Չնայած դուք ընկղմված եք մոլորության օվկիանոսի մեջ, ձեր շուրթերին Աստծու միակ իսկական հավատի դավանանքն է: Դուք սիրեցիք նրան, ով Ինձ հակառակ է և Իմ թշնամուն ձեզ ընկեր դարձրիք: Այնուամենայնիվ դուք քայլում եք Իմ երկրով անհոգ և ինքնագոհ՝ չիմանալով այն մասին, որ Իմ երկիրը հոգնել է ձեզանից, և նրա վրայի ամեն գոյը մերժում է ձեզ: Եթե դուք ձեր աչքերը բացեիք, հիրավի, կնախընտրեիք բազմաթիվ տրտմություններ այդպիսի ուրախությանը և կհամարեիք, որ մահն ինքնին ավելի լավ է, քան այդպիսի կյանքը:

21.Ո՛Վ, ՇԱՐԺՎՈՂ ՀՈՂ:

Ես ցանկանում եմ հաղորդակցվել քեզ հետ, բայց դու չես վստահում Ինձ: Քո խռովության թուրը կտրեց քո հույսի ծառը: Ամեն պահի Ես քո կողքին եմ, բայց դու միշտ հեռու ես Ինձանից: Ես քեզ համար ընտրեցի հավերժական փառք, իսկ դու քեզ համար ընտրեցիր անսահման նվաստացում: Քանի դեռ ժամանակ կա, վերադարձիր և բաց մի թող քեզ տրված հնարավորությունը:

22.Ո՛Վ, ԲԱՂՁԱՆՔԻ ՈՐԴԻ:

Գիտնականներն ու իմաստուններն երկար տարիներ փորձում էին հասնել Ամենափառավորի ներկայությանը, բայց ձեռք չբերեցին այդ. նրանք ամբողջ կյանքն անցկացրին Նրան փնտրելով, սակայն չտեսան Նրա գեղեցկությունը: Իսկ դու առանց որևէ դժվարության հասար քո նպատակին և առանց փնտրումների ձեռք բերեցիր այն, ինչին ձգտում էիր: Այնուամենայնիվ, դու դեռ այնքան ես պարուրված եսասիրության քողով, որ աչքերդ չտեսան Սիրեցյալի գեղեցկությունը և ձեռքդ չդիպչես Նրա հագուստների ծայրին: Աչքեր ունեցողները թող տեսնեն և զարմանան:

23.Ո՛Վ, ՍԻՐՈ ՔԱՂԱՔԻ ԲՆԻԿՆԵՐ:

Մահացու քամիները երերում են հավերժական մոմը, և երկնային Պատանու գեղեցկությունը թաքնված է հողի խավարում: Սիրո տիրակալների գլուխը բռնակալ մարդկանցից հալածանքներ է կրում, և սրբության աղավնյակը ընկնում է բվերի ճիրանների մեջ: Փառքի վրանի բնակիչները և երկնային կաճառները լալիս են ու հեծեծում, իսկ դուք արհամարհանքի արքայությունում հանգստության եք տրվում և ձեզ իսկական բարեկամներ եք համարում: Որքա՞ն ունայն են ձեր երազանքները:

24.Ո՛Վ, ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԲԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄԱՐՆԵՐ:

Ինչու՞ եք դուք ձեզ հայտնում հովիվների կերպարանքով, երբ, ըստ էության, դարձել եք Իմ հոտը դարանակալող գայլեր: Դուք նման եք մի աստղի, որն արշալույս է

ազդարարում և թվում է լուսաշող ու վառ, բայց իմ քաղաքի ճամփորդներին տանում է հեռու, դեպի կործանման ուղի:

25.Ո՛Վ, ԱՐՏԱՔՈՒՄՏ ՍՔԱՆՉԵԼԻՆԵՐ, ՍԱԿԱՅՆ ՆԵՐՔՈՒՄՏ ԳԱՐՇԱՀՈՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱԾՈՂՆԵՐ:

Դուք նման եք թափանցիկ, բայց դառը ջրի, որ արտաքուստ բյուրեղի պես մաքուր է, բայց եթե այն ճաշակի աստվածային Փորձարկուն, ապա ոչ մի կաթիլ չի ընդունվի Նրա կողմից: Չէ որ արևի շողն էլ է հավասարապես իջնում և՛ հողի, և՛ հայելու վրա, բայց արտացոլության մեջ դրանք տարբերվում են ինչպես աստղն ու երկիրը. ո՛չ, նրանց միջև եղած տարբերությունը անչափ է:

26.Ո՛Վ, ԻՄ ԲԱՐԵԿԱՄ՝ ԲԱՌԵՐՈՎ:

Մի քիչ մտորիր: Արդյո՞ք լսել ես դու, որ բարեկամն ու թշնամին խաղաղ գոյակցեն միևնույն սրտում: Ուրեմն, վռնդիր օտարականին, որպեսզի Բարեկամը մտնի Իր տունը:

27.Ո՛Վ, ՀՈՂԻ ՈՐՂԻ:

Այն ամենը, ինչ կա երկնքում ու երկրի վրա, Ես նախատեսել եմ քեզ, բացի մարդկային սրտից, որը Ես դարձրի իմ գեղեցկության ու փառքի կացարան, բայց դու իմ տունն ու կացարանը տվեցիր ուրիշին և ոչ ինձ: ԵՎ ամեն անգամ, երբ իմ սրբության հայտնումը փնտրում էր Իր ապաստարանը, այն օտարականի էր գտնում այնտեղ և անօթևան շտապում էր Սիրեցյալի սրբավայրը: Այնուամենայնիվ, Ես պահպանեցի քո գաղտնիքը՝ չցանկանալով քո խայտառակությունը:

28.Ո՛Վ, ԲԱՂՁԱՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆ:

Քանի անգամ եմ Ես լուսաբացին ուղղվել Անսահմանի տիրույթներից դեպի քո կացարանը և քեզ գտել պարապության մահճին ուրիշների և ոչ իմ հետ շփվելիս:

Այդժամ Ես հոգու կայծակի նման վերադառնում էի երկնային փառքի արքայություններ և Իմ երկնային սահմաններում չէի հիշատակում այդ մասին սրբության զորքի առջև:

29.Ո՛Վ, ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՈՐՂԻ:

Իմ պատվիրանի կավի միջոցով անէության անապատներից Ես քեզ հայտնեցի և քո դաստիարակության համար նախատեսեցի աշխարհում ամեն մի գոյություն ունեցող մասնիկ ու ամեն մի արարման էություն: Այսպես, դեռ մինչև մայրական արգանդից քո ելնելը Ես քեզ համար պատրաստեցի շողացող կաթի երկու աղբյուր և աչքեր, որպեսզի հետևեն քեզ ու սրտեր, որպեսզի սիրեն քեզ: Քո հանդեպ Իմ բարեհաճությունից Ես քեզ կերակրեցի Իմ ողորմածության հովանու տակ՝ պաշտպանելով քեզ Իմ վերին օգնության և առատածեռնության էությամբ: Ըստ որում, Ես ցանկանում էի, որպեսզի դու հասնեիր Իմ հավերժական տիրույթին և արժանանայիր Իմ աներևույթ ընծաներին: Իսկ դու անհոգ էիր և հասունանալով՝ արհամարհեցիր Իմ բոլոր առատածեռնությունները և այնպես տարվեցիր աննպատակ երազանքներով, որ մոռացար ամեն ինչի մասին ու շրջվելով Բարեկամի դռներից՝ բնակվեցիր իմ թշնամու սահմաններում:

30.Ո՛Վ, ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՍՏՐՈՒԿ:

Որքան է լուսաբացին քեզ վրա փչել Իմ սիրո քամին և գտել քեզ խորը քնի մեջ անփութության մահճին: Ողբալով քո ճակատագիրը՝ այն վերադառնում էր այնտեղ, որտեղից սկիզբ էր առել:

31.Ո՛Վ, ԵՐԿՐԻ ՈՐՂԻ:

Երբ ցանկանում ես գտնել Ինձ, մի փնտրիր ոչ ոքի, բացի Ինձանից և երբ ցանկանում ես դիտել Իմ գեղեցկությունը, աչքերդ փակիր այս աշխարհի և այնտեղ եղած ամեն գոյի վրա, քանզի Իմ և մեկ ուրիշի կամքը, ինչպես կրակն ու ջուրը, չեն կարող համատեղ ապրել մեկ սրտում:

32.ՈՐԿ, ՀՅՈՒՐԸՆԿԱԼԿՈՂ ԱՆԾԱՆՈԹ:

Քո սրտի մոմը վառված է Իմ հզորության աջով. մի հանգրուու այն եսասիրության և կրքի հակառակ քամիներով: Քո բոլոր տկարությունների ապաքինումն Ինձ հիշատակելու մեջ է, մի մոռացիր այդ մասին: Իմ սերը քո գանձը դարձրու, պահպանիր այն աչքի լույսի և քո կյանքի պես:

33.ՈՐԿ, ԻՄ ԵՂԲԱՅՐ:

Լսիր Իմ քաղցրախոս լեզվից բխող բարեհունչ բառերը և ճաշակիր խորհրդավոր սրբության ցայտից, որ հոսում է Իմ քաղցր շուրթերից: Գցիր Իմ աստվածային իմաստունության սերմերը քո սրտի մաքուր հողի մեջ և ոռոգիր դրանք վստահության ջրով, որպեսզի Իմ գիտելիքի և իմաստութնության հակինթները ծլեն՝ թարմ և կանաչ, քո սրտի սուրբ քաղաքում:

34.ՈՐԿ, ԻՄ ՂՐԱԽՏԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ:

Սիրող խնամքի ձեռքերով սրբազան դրախտային այգում տնկեցի Ես ձեր սիրո և ընկերության մատաղ ծառը և ոռոգեցի այն Իմ նուրբ ողորմածության առատ անձրևներով: Այժմ, երբ եկել է դրա պտուղ տալու ժամանակը, ջանացեք պահպանել այդ, և թող չկլանի դրան բաղձանքի և կրքերի կրակը:

35.ՈՐԿ, ԻՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ:

Հանգրեք մոլորության կանթեղը և ձեր սրտերում վառեք աստվածային առաջնորդության հավերժական լուսատուն: Քանզի մարդկանց փորձարկուները այսուհետև Պաշտելիի սրբազան ներկայությամբ կընդունեն միայն ամենամաքուր առաքինությունը և անարատ սրբության գործերը:

36.Ո՛Վ, ՀՈՂԻ ՈՐՂԻ:

Իմաստուն է նա, ով խոսում է միայն այն ժամանակ, երբ լսում են իրեն, չէ՞ որ մատռվակն էլ գավաթ չի տա, մինչև չգտնի ծարավին, և սիրողը չի բղավի իր սրտի խորքից, մինչև չտեսնի իր սիրեցյալի գեղեցկությունը: Ուրեմն, իմաստունության և գիտելիքի սերմերը գցիր սրտի մաքուր հողի մեջ և ծածկիր դրանք, մինչև որ սրտից, այլ ոչ թե ցեխից ու կավից կծլեն աստվածային իմաստունության հակինթները:

Հուշատախտակի սկզբի տողում գծված ու գրված է և Աստվածային խորանի տաճարում թաքնված է.

37.Ո՛Վ, ԻՄ ԾԱՌԱ:

Մի լքիր անանցողիկ տիրույթները հանուն այն բանի, ինչ մահկանացու է և մի մերժիր երկնային տիրակալությունը հանուն աշխարհիկ բաղձանքի: Ահա հավերժական կյանքի գետը, որ սկիզբ է առնում ողորմած գրչի աղբյուրից. բարօրություն նրան, ով ճաշակում է:

38.Ո՛Վ, ՈԳՈՒ ՈՐՂԻ:

Կոտրիր քո վանդակը և սիրո փյունիկի նման ճախրիր սրբության երկնքները: Հրաժարվիր քեզանից և ողորմածության ոգով լցված՝ կեցիր երկնային մաքրության արքայությունում:

39.Ո՛Վ, ՀՈՂԻ ԾՆՈՒՆԴ:

Մի գոհացիր անցողիկ օրվա հանգստությամբ և չես զրկի քեզ հավերժ հանգստից: Անսահման բերկրանքի այգին մի փոխարինիր այս մահկանացու աշխարհի մի կույտ հողով: Քո զնդանից բարձրացիր հրաշալի լեռնային մարգագետինները և քո մահացու վանդակից թռչքո ուղղիր Ամենագոյի դրախտը:

40.ՈՐԿ, ԻՄ ԾԱՌԱ:

Ազատվիր այս աշխարհի կապանքներից և հոգիդ ազատիր Եսասիրության զնդանից:
Օգտվիր այդ առիթից, քանզի այդ հնարավորությունը այլևս չի ստեղծվի:

41.ՈՐԿ, ԻՄ ՍՊԱՍԱՎՈՐՈՒՀՈՒ ՈՐԴԻ:

Եթե դու տեսնեիր անմահ արքայությունը, ապա կանեիր ամեն ինչ այս անցողիկ աշխարհը լքելու համար: Բայց մեկը քեզանից թաքցնելու և մյուսը բացահայտելու մեջ կա գաղտնիք, որը հասանելի է միայն սրտով ազնիվներին:

42.ՈՐԿ, ԻՄ ԾԱՌԱ:

Սիրտդ մաքրիր չարությունից և չնախանձելով՝ մտիր սրբության աստվածային կացարան:

43.ՈՐԿ, ԻՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ:

Քայլեք Բարեկամի բարի կամքի ուղիներով և գիտցեք, որ Նրա ուրախությունը Նրա ստեղծածների ուրախության մեջ է: Ուրեմն, թող ոչ ոք չմտնի իր մերձավորի տունը, եթե չկա նրա բարեհաճ թույլտվությունը և թող ձեռքերը չդնի նրա հարստության վրա, և թող իր ցանկությունը չնախընտրի մերձավորի ցանկությունից, և թող ոչ մի տեղ գերազանցություն չփնտրի նրա հանդեպ: Ստորեք այդ մասին, ով խորաթափանցներ:

44.ՈՐԿ, ՄԵՐՁԱՎՈՐ ԻՄ ԳԱՀԻ:

Ականջ մի դիր չարին և մի նկատիր չարը, մի նսեմացիր, մի տրտմիր և մի հեծեճա:
Չարախոս մի եղիր, որպեսզի չար խոսքեր չլսես և մի չափազանցու ուրիշների արատները, որպեսզի քո սեփական արատները մեծ չթվան, և մի ցանկացիր ոչ մեկի նվաստացումը, որպեսզի քո նվաստացումը չդառնա ակնհայտ: Թող, որ ապրես քո կյանքի օրերը, որ կարճ ակնթարթից էլ կարճ են, անարատ մտքով, անբիծ սրտով,

մաքուր մտադրություններով և անմեղ հոգով, որպեսզի ազատ և ուրախ դեն նետես այս մահկանացու թաղանթը և վերադառնաս նվիրական դրախտ ու բնակվես ամնահ արքայությունում հավիտյանս հավիտենից:

45. ԱՎԱՂ, ԱՎԱՂ ՁԵՋ, Ո՛Վ, ԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՂՁԱՆՔՆԵՐ ՍԻՐՈՂՆԵՐ:

Կայծակի նման սլացաք դուք Սիրեցյալի կողքով և տրվեցիք սատանայական երազանքներին: Դուք ծունկի եք իջնում ձեր աննպատակ հերյուրանքների առջև և դրանք ճշմարտություն եք անվանում: Դուք ձեր հայացքներն ուղղում եք տատասկին և այն ծաղիկ անվանում: Ոչ մի մաքուր շունչ չի բխում ձեզանից և ձեր սրտերի մարգագետիններից խորթացման շունչ չի փչում: Դուք քանուն տվեցիք Սիրեցյալի նուրբ հորդորումները՝ բոլորովին վերացնելով դրանք ձեր սրտերի հուշատախտակներից և դաշտային գազանների նման գտնվում եք բաղձանքի ու կրքի արոտավայրերում:

46. Ո՛Վ, ՄԱՐԴԻԿ ՈՒՂՈՒ ՎՐԱ:

Ինչու՞ եք դուք արհամարհում Սիրեցյալի հիշատակումը և ձեզ հեռու պահում Նրա սուրբ ներկայությունից: Գեղեցկության էությունը աննման վրանում է՝ բազմած փառքի գահին, իսկ դուք զբաղված եք աննպատակ վիճաբանություններով: Տարածվում են սրբության բուրմունքները, և փչում է ողորմածության շունչը, բայց դուք բոլորդ խոցված եք ծանր հիվանդությամբ և զրկված այս ամենից: Ավա՛ղ, վա՛յ ձեզ և նրանց, ովքեր քայլում են ձեր ճանապարհներով և ձեր հետքերով:

47. Ո՛Վ, ԲԱՂՁԱՆՔԻ ԶԱՎԱԿՆԵՐ:

Դեն զցեք սնափառության հագուստները և ձեր վրայից քաշեք - հանեք գոռոզության զգեստը:

Սրբազան տողերից երրորդում՝ գրված և գծված Սուտակե Հուշատախտակում Անտեսանելիի գրչով, բացահայտված է այս.

48.ՈՐԿ, ԵՂԲԱՅՐԱԿԻՑՆԵՐ:

Իրար հանդեպ հանդուրժող եղեք և մի կապվեք անազնիվ բաների: Մի հպարտացեք ձեր փառքից և մի ամաչեք նսենացումից: Երդվում եմ Իմ Գեղեցկությամբ: Ես ամեն բան հողից ստեղծեցի և հողին էլ կվերադարձնեմ:

49.ՈՐԿ, ՀՈՂԻ ԶԱՎԱԿՆԵՐ:

Հարուստներին պատմեք աղքատի կեսգիշերային հեծեծանքների մասին, որպեսզի արհամարհանքը նրանց չտանի դեպի կործանման ճանապարհ և չզրկի Առատության Ծառից: Ինձ բնորոշ է ընծայել և առատաձեռն լինել. բարիք նրան, ով իրեն զարդարում է Իմ առաքինություններով:

50.ՈՐԿ, ԲԱՂՁԱՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆ:

Դեն զցիր ամեն տեսակի ազահությունը և ձգտիր առատության, քանզի ազահը միշտ գուրկ է մնում, իսկ գոհը՝ սիրված ու գովաբանված:

51.ՈՐԿ, ԻՄ ՍՊԱՍԱՎՈՐՈՒՀՈՒ ՈՐԴԻ:

Մի տազնապիր աղքատության մեջ և հույս մի դիր հարստության վրա, քանզի աղքատությանը հետևում է հարստությունը, իսկ հարստությանը՝ աղքատությունը: Սակայն ամեն ինչում աղքատ լինելը, բացի Աստծուց, հրաշալի պարզև է. մի սակավացրու դրա արժեքը, քանզի այն քեզ վերջապես կհարստացնի Աստծու մեջ և կճանաչես «Հիրավի, դուք աղքատ եք» ասույթի իմաստը և «Աստված տիրում է ամեն ինչին» սուրբ բառերը, որոնք սիրող սրտի երկնակամարին իսկական արշալույսի պես կծագեն փառքի շողով և կհաստատվեն առատության գահին:

52.Ո՛Վ, ԱՆՓՈՒԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՐՔԻ ԶԱՎԱԿՆԵՐ:

Դուք թույլ տվեցիք Իմ թշնամուն մտնել Իմ տունը և վռնդեցիք Իմ բարեկամին, քանզի ձեր սրտերում թույլ տվեցիք սիրո ներխուժումն ոչ թե Իմ հանդեպ, այլ ուրիշների: Անսացեք Բարեկամի խոսքերին և սլացեք դեպի Նրա դրախտը: Աշխարհիկ բարեկամները ցուցաբերում են փոխադարձ սեր անձնական շահից, իսկ իսկական Բարեկամը սիրեց ու սիրում է ձեզ հանուն ձեզ. հիրավի, հանուն ձեր առաջնորդության Նա կրեց բազմաթիվ ձախորդություններ: Մի դավաճանեք այդպիսի Բարեկամին, շտապեք Նրա մոտ: Սա է ճշմարտության և հավատարմության խոսքերի ցերեկային լուսատուն, որ ծագեց բոլոր անունների Տիրոջ գրչի երկնականարում: Բացեք ձեր ականջը, որպեսզի լսեք Աստծու խոսքը՝ վտանգի մեջ Օգնող, Ինքնագո:

53.Ո՛Վ, ԴՈՒՔ, ՈՐ ԳՈՈՌԶԱՑԵԼ ԵՔ ՈՒՆԱՅՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՄԲ:

Գիտցեք, հիրավի, որ հարստությունը ամուր արգելք է փնտրողի և նրա ցանկության առարկայի, սիրողի և նրա սիրեցյալի միջև: Հարուստները բացառությամբ քչերի, երբեք չեն հասնի Նրա ներկայության արքունիքին և չեն մտնի լիության և հնազանդության քաղաքը: Բարիք է նրան, ով լինելով հարուստ՝ իր հարստությամբ չի հեռացել հավերժական արքայությունից և չի առանձնացել ունայնին տիրանալուց: Երդվում եմ Մեծագույն Անունով: Այս հարուստ մարդուց բխող փայլը կլուսավորի երկնքների բնակիչներին, ինչպես արևը լուսավորում է երկրի վրա ապրողներին:

54.Ո՛Վ, ԵՐԿՐԻ ՀԱՐՈՒՄՏՆԵՐ:

Ձեզ վստահեցի Ես աղքատներին, որ ապրում են մեր մեջ. պահպանեք Իմ հանձնարարվածը և մի ձգտեք միայն սեփական առատությանը:

55.Ո՛Վ, ԲԱՂՁԱՆՔԻ ՈՐԴԻ:

Մաքրիր քեզ հարստության ապականությունից և կատարյալ խախաղությամբ մտիր աղքատության կացարանը, որպեսզի հրաժարեցման աղբյուրից ճաշակես անմահ կյանքի գինին:

56.ՈՐՎ, ԻՄ ՈՐՂԻ:

Անօրենի հետ շփումը բազմապատկում է վշտերը, իսկ ընկերությունը առաքինու հետ սիրտը մաքրում է ժանգից: Աստծու հետ հաղորդակցություն փնտրողը թող մուտք գործի Նրա սիրեցյալների ընկերակցություն և Աստծու խոսքը լսել ցանկացողը թող անսա Նրա ընտրյալների խոսքերին:

57.ՈՐՎ, ՀՈՂԻ ՈՐՂԻ:

Ջգուշացիր: Մի՛ քայլիր անօրենի հետ և մի՛ փնտրիր բարեկամություն նրա հետ, քանզի նման շփումը սրտի լույսը դարձնում է դժոխային կրակ:

58.ՈՐՎ, ԻՄ ՍՊԱՍԱՎՈՐՈՒՀՈՒ ՈՐՂԻ:

Եթե փնտրում ես Սուրբ Ոգու վերին օգնությունը, շփվիր առաքինու հետ, քանզի նա անմահ Մատռվակի ձեռքերից խմեց հավերժական կյանքի գավաթը և իսկական արևածագի նման կենդանացրեց և լուսավորեց մեռածների սրտերը:

59.ՈՐՎ, ԱՆՀՈԳՆԵՐ:

Մի կարծեք, որ սրտերի գաղտնիքները թաքնված են. ո՛չ, գիտցեք հաստատ, որ դրանք պարզ տառերով գծված են և բացահայտորեն հայտնված են սուրբ Ներկայությունում:

60.ՈՐՎ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ:

Ես ճշմարիտ եմ ասում. այն ամենը, ինչ դուք թաքցրել եք ձեր սրտերում, Մեզ համար բացեիբաց է և պարզ ինչպես օրը, ուրեմն, այս ամենի թաքցնելը Մեր ողորմածությունն է և բարեհաճությունը և ոչ թե ձեր արժանիքը:

61.Ո՛Վ, ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻ:

Իմ ողորմածության անհատակ օվկիանոսից ես գեղեցի ցողի կաթիլը երկրի մարդկանց վրա, բայց չգտա ոչ մեկի, ով դիմեր դրան, քանզի ամեն մեկը շրջվեց միասնացման երկնային գինուց դեպի անմաքրության գարշահոտ նստվածքը և գոհանալով մահացու թասով՝ մերժեց անմահ գեղեցկության գավաթը: Նողկալի է այն, ինչով գոհացան նրանք:

62.Ո՛Վ, ՀՈՂԻ ՈՐԴԻ:

Մի հեռացրու աչքերդ անզուգական գինուց, որ անմահ Սիրեցյալից է և մի բացիր դրանք գարշահոտ ու մահկանացու նստվածքի վրա: Աստվածային Մատռվակի ձեռքերից ընդունիր անմահ կյանքի գավաթը և կգտնես ամեն տեսակի իմաստունություն և կանսաս անտեսանելի արքայությունից կանչող խորհրդավոր ձայնին: Ուրեմն, ողբացեք, ով դուք՝ անագնիվին ձգտողներ: Ինչու՞ դուք շրջվեցիք Իմ սուրբ ու անմահ գինուց՝ հանուն թոպեական ջրի:

63.Ո՛Վ, ԵՐԿՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ:

Գիտցեք, հիրավի, որ անհայտ աղետը ձեզ է հետևում և ծանր հատուցումը ձեզ է սպասում: Մի կարծեք, որ ձեր արածը վերացավ Իմ հայացքից: Երդվում եմ Իմ գեղեցկությամբ: Ձեր բոլոր արարքները Իմ գրիչը պարզ տառերով ցայտունորեն պատկերել է խրիզոլիթից հուշատախտակների վրա:

64.Ո՛Վ, ԵՐԿՐԱՅԻՆ ԿԵՂԵՔԻՉՆԵՐ:

Մի կողմ տարեք ձեր ձեռքերը բռնակալությունից, քանզի Ես երդվել եմ չներել մարդկային չնչին անարդարությունը: Այդ է Իմ կտակը, այդ անխախտելիորեն հռչակեցի Ես պահվող հուշատախտակում և հաստատեցի Իմ փառքի կնիքով:

65.ՈՐԿ, ԽՈՌՎԱՐԱՐՆԵՐ:

Իմ հանդուրժողականությունը ձեզ հանդգնություն է տվել, իսկ իմ համբերատարությունը ձեզ դարձրել է այնքան անհոգ, որ դուք ասպանդակեցիք բաղձանքի հրե նժույզը և քշեցիք դրան ոչնչացմանը տանող մահաբեր ճանապարհով: Միթե՞ դուք կարծում էիք, որ Ես անփույթ եմ կամ չգիտեմ այդ մասին:

66.ՈՐԿ, ՁԵՐ ԵՐԿԻՐԸ ԼՔՈՂՆԵՐ:

Ես ստեղծեցի լեզու, որպեսզի հիշատակեն Ինձ. մի պղծեք այն պարսավանքով: Եթե ձեզ համակի եսասիրության կրակը, հիշեք ձեր մեղքերը և ոչ թե իմ ստեղծածների մեղքերը, քանզի ձեզանից ամեն մեկը իրեն ավելի լավ է ճանաչում, քան ուրիշին:

67.ՈՐԿ, ԿԵՂԾՈՒԹՅԱՆ ՋԱՎԱԿՆԵՐ:

Հիրավի, գիտցեք՝ երբ լուսաշող արշալույսը կփայլատակի հավերժ սրբության երկնականարին, սատանայական գաղտնիքները և գիշերվա խավարում կատարված գործերը կբացվեն ու կներկայանան աշխարհի ժողովուրդների առջև:

68.ՈՐԿ, ՀՈՂԻՑ ԱՃՈՂ ՄՈՒԱԽՈՏ:

Ինչու՞ դու կեղտոտ ձեռքերով չես դիպչում քո հագուստներին, իսկ կրքերով ու բաղձանքով պղծված սրտով փնտրում ես իմ մտերմությունը և հույս փափագում մուտք գործել իմ սրբազան կացարանը: Օ՛, որքան ես դու հեռու այն բանից, ինչ ցանկանում ես:

69.ՈՐԿ, ԱՂԱՄԻ ՋԱՎԱԿՆԵՐ:

Սուրբ խոսքերը և անարատ ու բարի գործերը վեր են բարձրանում երկնային փառքի երկնքները: Ջանացեք, որ ձեր գործերը մաքրվեն եսասիրության ու կեղծավորության փոշուց և փառքի արքունիքում արժանանան բարեհաճ ընդունելության, քանզի

այսուհետև մարդկանց փորձարկումները Պաշտելիի սուրբ ներկայությամբ կընդունեն միայն կատարյալ առաքինությունը և անարատ մաքրության արարքները: Այս է իմաստունության և աստվածային խորհրդի ցերեկային լուսատուն, որ շողաց աստվածային կամքի երկնակամարում: Օրհնյալ են նրանք, ովքեր դիմում են այս ամենին:

70.ՈՐԿ, ԱՇԵԱՐՀԻԿ ՈՒՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՈՐԴԻ:

Հաճելի է գոյության կացարանը, եթե դու հասնես դրան, հրաշալի է հավերժության արքայությունը, եթե դու վեր բարձրանաս այս մահկանացու աշխարհից, քաղցր է սուրբ արբեցումն, եթե դու երկնային Պատանու ձեռքերից խմես գաղտնիքների գավաթը: Եթե հասնես այս վիճակին, կխուսափես կործանումից ու մահից, դժվարություններից ու մեղքից:

71.ՈՐԿ, ԻՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ:

Հիշեք պատգամի մասին, որ դուք կնքեցիք Իմ հետ Պարան լեռան վրա Ջաման սուրբ հողում: Որպես վկա Ես վերցրեցի երկնային կաճառները և հավերժության քաղաքի բնակիչներին, սակայն այսօր Ես չգտա այս պատգամին հավատարիմ ոչ ոքի: Անշուշտ, հպարտությունն ու խռովությունը վերացրին այն սրտերից, այնպես որ հետք էլ չմնաց: Գիտենալով այդ մասին՝ ես, այնուամենայնիվ հապաղում էի և չբացեցի այս:

72.ՈՐԿ, ԻՄ ԾԱՌԱ:

Դու նման ես պատյանի խավարում բանտարկված հմտորեն թրծված շեղբի, որի արժեքը հայտնի չէ զինագործին: Ուրեմն, լույս աշխարհ արի եսասիրության ու բաղձանքի պատյանից, որպեսզի քո արժանապատվությունը ակնհայտորեն շողա ամբողջ աշխարհի առաջ:

73.ՈՐԿ, ԻՄ ԲԱՐԵԿԱՄ:

Դու ցերեկային լուսատու ես Իմ սրբության երկնքներում, թող աշխարհիկ ապականությունը չխավարեցնի քո փայլատակումը: Պատռիր անփութության քողը և

չլացուցիչ փայլով կհայտնվես ամպերի հետևից և ամեն ինչ կհագցնես կյանքի զգեստով:

74.Ո՛Վ, ՓԱՌԱՄՈՒԼՈՒԹՅԱՆ ՋԱՎԱԿՆԵՐ:

Հանուն րոպեական տիրապետության դուք հրաժարվեցիք իմ անանց տիրույթից և գուգվեցիք խայտաբղետ աշխարհիկ հագուստների մեջ՝ պարծենալով դրանցով: Երդվում եմ իմ գեղեցկությամբ: Ես հողի միագույն ծածկույթի տակ կհավաքեմ բոլորին և կվերացնեմ նրանց բոլոր գունային տարբերությունները, բայց չեմ վերացնի նրանց գույները, ովքեր ընտրել են իմ սեփականը, որը մաքրումն է ամեն գույնից:

75.Ո՛Վ, ԱՆՓՈՒԹՈՒԹՅԱՆ ՋԱՎԱԿՆԵՐ:

Մի կապվեք մահացու տիրապետությանը և մի ուրախացեք դրանով: Դուք նման եք անհոգ թռչնի, որ շատ հանգիստ ծլվլում է ճյուղի վրա, երբ հանկարծ մահ-թռչնորսը ցած է նետում և հող դարձնում թռչնին և դրա երգը, պատկերն ու գույները անհետ կորում են: Ուրեմն, զգուշացեք, ո՛վ բաղձանքի ստրուկներ:

76.Ո՛Վ, ԻՄ ՍՊԱՍԱԿՈՐՈՒՀՈՒ ՈՐԴԻ:

Առաջնորդությունը վաղուց ի վեր տրվում էր բառերի միջոցով, այժմ այն տրվում է գործերի միջոցով: Յուրաքանչյուրը պետք է հայտնի մաքուր և սուրբ գործեր, քանզի խոսքին տիրապետում է ամեն մեկն, իսկ գործերն այս պատկանում են միայն նրանց, ում Մենք սիրեցինք: Ուրեմն, ձգտեք սրտով և հոգով աչքի ընկնել ձեր գործերով: Այսպես ենք Մենք ձեզ խրատում այս սուրբ և լուսաշող հուշատախտակում:

77.Ո՛Վ, ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԴԻ:

Նա, Ում մեջ հայտնված է Անմահի գեղեցկությունը, գիշերով վերադարձավ հավատարմության զմրուխտե գագաթից դեպի Սադրատուլ-Մունթահա և այնպիսի հեկեկոցով հեկեկաց, որ երկնային կաճառները և երկնային արքայությունների

բնակիչները լաց եղան՝ լսելով նրա հառաչանքը: Այնուհետև հարցրին. «Ինչու՞մն է հառաչանքի ու լացի պատճառը»: Նա պատասխանեց. «Կատարելով հրամանը՝ ես սպասում էի հավատարմության բլրի վրա, բայց երկրի բնակիչներից չչնչեցի հավատարմության և ոչ մի բույր: Այնուհետև, կոչված վերադառնալ՝ Ես նայեցի ու տեսա, թե ինչպես են սրբության մի քանի աղավնյակներ թփրտում երկրային շների ճիրաններում»: Այնժամ երկնային Կույսը, բաց դեմքով, շողշողացող շտապեց Իր խորհրդավոր կացարանից, որպեսզի իմանա նրանց անունները և ասվեցին բոլոր անունները, բացի մեկից: Իսկ երբ նա սկսեց պնդել, արտասանվեց անվան առաջին տառը, ինչի պատճառով երկնային ննջարանների բնակիչները հեռացան իրենց փառքի կացարանից: Իսկ երբ կարդացին երկրորդ տառը, նրանք բոլորը դեմքով ընկան հողի մեջ: Այդ պահին սրբության սրբոցից ձայն լսվեց. «Մինչ այս սահմանը և ոչ ավելին»: Հիրավի, Մենք վկայում ենք այն մասին, թե ինչ են նրանք արել և ինչ են անում այժմ:

78.Ո՛Վ, ԻՄ ՍՊԱՍԱՎՈՐՈՒՀՈՒ ՈՐԴԻ:

Ողորմածի շուրթերից խմիր աստվածային գաղտնիքների ջուրը և աստվածային ասույթների արշալույսից դիտիր իմաստունության ցերեկային լուսատուի հայտնված փայլալատակումը: Ցանիր Իմ աստվածային իմաստունության սերմերով սրտի մաքուր հողը և ոռոգիր այն վստահության ջրով, որպեսզի գիտելիքի և իմաստունության հակինթները՝ թարմ ու կանաչ ծլեն սրտի սուրբ քաղաքում:

79.Ո՛Վ, ԲԱՂՁԱՆՔԻ ՈՐԴԻ:

Որքա՞ն դու պետք է ճախրես բաղձանքի արքայություններում: Ես քեզ թևեր տվեցի, որպեսզի դու վեր խոյանաս սրբության խորհրդավոր արքայությունները և ոչ թե սլանաս սատանայական հերյուրանքների սահմանները: Ես քեզ տվեցի նաև սանր, որպեսզի դու սանրես Իմ սևաթույր գանգուրները, այլ ոչ թե դրանով ծվատես Իմ կոկորդը:

80.ՈՐԿ, ԻՄ ԾԱՌԱՆԵՐ:

Դուք Իմ այգու ծառերն եք. դուք պետք է բարի ու հրաշալի պտուղներ տաք, որպեսզի և դուք ինքներդ և ուրիշները կարողանան օգտվել դրանցից: Ուրեմն, յուրաքանչյուրը պետք է ընտրի արհեստ կամ զբաղմունք, քանզի դրանում է թաքնված բարեկեցության գաղտնիքը, ո՛վ ըմբռնման մարդիկ: Չէ որ արդյունքը կախված է միջոցներից և ձեզ համար ամենածանրակշիռը կլինի Աստծու ողորմածությունը: Անպտուղ ծառերը միշտ եղել են և կլինեն սնունդ կրակի համար:

81.ՈՐԿ, ԻՄ ԾԱՌԱ:

Մարդկանցից ամենաողորմելիները նրանք են, ովքեր երկրի վրա պտուղ չեն բերում: Նման մարդիկ, հիրավի, դասված են մեռածների շարքին. օ՛ր՛նչ, Աստծու աչքերում մեռածները ավելի բարձր են, քան այս անբան ու բոլորովին անպետք հոգիները:

82.ՈՐԿ, ԻՄ ԾԱՌԱ:

Մարդկանցից ամենաարժանիները նրանք են, ովքեր ապրուստ են վաստակում իրենց արհեստով և ծախսեր են անում իրենց ու իրենց հարազատների համար հանում Աստծու՝ բոլոր աշխարհների Տիրոջ սիրո:

Խորհրդավոր ու հրաշալի Հարսը՝ մինչ այժմ թաքնված ասույթի քողի տակ, այսօր հայտնված է Աստծու ողորմածությամբ և Նրա աստվածային բարեհաճությամբ, ինչպես Սիրեցյալի գեղեցկությունից փայլատակող վառ լույսը: Ես վկայում եմ, ո՛վ բարեկամներ, որ ողորմածությունը գեղված է լիակատար չափով, փաստարկը բերված է, ապացույցը ներկայացված և վկայությունը հաստատված: Թող այսուհետև ձեր ջանքերի պտուղները տեսանելի լինեն հրաժարեցման ճանապարհին: Քանզի աստվածային բարեհաճությունը լիովին ընծայված է ձեզ և նրանց, ովքեր երկնքում ու երկրի վրա բուն էություն են: Ամեն տեսակի փառաբանություն թող լինի Աստծուն՝ բոլոր աշխարհների Տիրոջը:

«ՆՎԻՐԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ»

գրքի մասին

Նվիրական Խոսքերը հայտնված էին Բահաուլլայի կողմից մոտավորապես 1858թվ: Աստվածային խորհուրդների ու խրատների այդ յուրահատուկ ժողովածուն իրենից ներկայացնում է մարդկանց համար կատարյալ ղեկավարություն իրենց ճանապարհին՝ դեպի Տիրոջ հոգևոր աշխարհները:

Բահաուլլան (1817-1892)՝ Բահայի կրոնի հիմնադիրը, Իր առաքելության մասին հայտարարեց 1863թվ: Իրենց բահայի անվանող Նրա հետևորդները հավատում են, որ այս պահին Նա Աստծու վերջին Ավետաբերն է, որ շարունակում է այնպիսի Ավետաբերների առաքելությունը, ինչպիսիք են Աբրահամը, Կրիշնան, Մովսեսը, Բուդդան, Ջրադաշտը, Քրիստոսը և Մոհամեդը:

Բահաուլլայի Նախակարապետն էր Բաբ (1819-1850) անունով Մարգարեն, որը 1844թվ. մայիսին հայտարարեց Նրա գալուստի մասին, Ով ավելի բարձր է, քան Ինքը և Ում նախկին Հայտնությունների Սուրբ Գրքերով նշանակված է հայտնել բարեպաշտության ու խաղաղության դարաշրջանը:

Բահաուլլայի Գործի Շարունակողը դարձավ Նրա որդի Աբդուլ-Բահան(1844-1921)՝ նշանակված Իր կողմից որպես Իր հետևորդ և ուսմունքի լիազոր Մեկնաբան:

Բահաուլլայի ուսմունքի գլխավոր թեման միասնությունն է: Նա ասում էր, որ կա միակ Աստված, որ բոլոր համաշխարհային կրոնները «հավերժ անցյալում, հավերժ ապագայում Աստծու անփոփոխ Հավատի» արտահայտման էությունն են, որ ամբողջ մարդկությունը միասնական ցեղ է, որը պետք է ապրի խաղաղության և համերաշխության մեջ:

Բահաուլլայի՝ նոր մեծ դարաշրջանի (որտեղ մուտք գործեց մարդկությունը) Մարգարեի նպատակն է ոչ թե անցյալի Հայտնությունների խորտակումն, այլ դրանց կյանքի կոչումն, ոչ թե հակամարտող ուսմունքների միջև եղած ժամանակակից հասարակությունը պառակտող տարբերությունների ընդգծումն, այլ դրանց հաշտեցումը: Այդ վեհ նպատակին են ծառայում Բահաուլլայի բազմաթիվ Սուրբ Գրքերը, որոնց մեջ հատուկ տեղ են գրավում *Նվիրական Խոսքերը*՝ ուղղված անմիջապես յուրաքանչյուր մարդու հոգուն: *Նվիրական Խոսքերը* հասկանալու համար պետք է հաշվի առնել մարդու երկակի բնույթը, հատկապես երկու հակադիր և փոխկապակցված սկզբերի՝ հոգևոր ու ֆիզիկական, հոգու և մարմնի

գոյակցությունը դրանում: Աստծու կերպարով ու նմանությամբ ստեղծված հոգին ընդունակ է ձեռք բերել աստվածային հատկանիշներ և երկնային հատկություններ: Բաժանվելով մարմնից՝ այն կշարունակի զարգանալ մաքրության ու առաքինության այն վիճակին համապատասխան, որին հասել էր երկրային կյանքի վերջում:

Նվիրական խոսքերում հիշատակվող «դրախտ», «դրախտային այգի», «երկինքներ» գաղափարները խորհրդանիշներ են, որոնք նկարագրում են Աստծուն մերձեցած հոգու վիճակը. նույն ձևով «դժոխք»-ը խորհրդանշում է Նրանից հեռացած հոգու վիճակը: Մարդու համար առավել բարձրագույն վիճակն է «հավատի ոգով» տոգորվելը, ինչի համար անհրաժեշտ է հավատալ իր դարաշրջանի Աստծու Ավետաբերին և հնազանդորեն կատարել Նրա կտակները: Բահաուլլան նշում է, որ նարդու գիտելիքներն ու կրթությունը իրենք իրենցով որքան էլ խորը լինեն, չեն տա նրան հոգևոր իրականության բավականաչափ հասկացում. անհրաժեշտ է, որպեսզի լուսավորվի սիրտը՝ աստվածային հատկությունների կացարանը:

Բահաուլլայի *Նվիրական խոսքերի* գլխավոր նպատակն է օգնել մարդուն մաքրել սեփական սիրտը, հեռացնել նրան անցողիկ աշխարհի հետ կապվածությունից և պաշտպանել նրա հոգին չարագույն թշնամուց՝ իր իսկ սեփական արատավոր «կրքերից ու բաղձանքներից»: Բահաուլլան սովորեցնում է, որ այս աշխարհում ամեն ինչ ստեղծված է մարդու բարօրության համար: Աստված մարդուն իրավունք է տալիս տիրելու բոլոր բարիքները, որոնց նա կկարողանա արժանանալ և թույլ է տալիս նրան ճաշակել կյանքի բոլոր բարի խնդությունները: Բայց մարդը չպետք է թույլ տա որևէ բանի խոչընդոտ դառնալ իր և Աստծու միջև:

Ճետեղով մյուս Մարգարեներին՝ Բահաուլլան սովորեցնում է, որ «հարստությունը մեծ խոչընդոտ է փնտրողի և նրա ցանկության միջև, սիրողի և սիրեցյալի միջև», սակայն Նա զգուշացնում է, որ և աղքատներին կարող է սպասել նման խոչընդոտ: Մարդկային գոռոզությունն ու եսասիրությունը, իսկ հաճախ նաև նրա գիտունությունը, դիրքը, հասարակության կողմից ճանաչումն այն խոչընդոտներն են, որ առանձնացնում են մարդուն Աստծուց:

Նվիրական խոսքերը գրված են վեհ բանաստեղծական լեզվով՝ փոխաբերությունների, խորհրդանիշների և այլաբանությունների կիրառմամբ: Դրանցից մի քանիսը բացատրված էին Աբդուլ-Բահայի ստեղծագործություններում:

Այսպես, խոսք 19-ում (պարսկերենից) «իսկական և լուսաշող առավոտ» բառերը որոշում են Բաբի Հայտնությունը, «կյանքի ծառը»՝ Բահաուլլայի, իսկ «սուրբ և օրհնյալ վայրը»՝ մարդու սիրտը: Մյուս Հուշատախտակներում Աբդուլ-Բահան բնութագրում է հավաքը «կյանքի ծառի տակ»՝ որպես Բահաուլլայի Կտակի հաստատում: Այդ Կտակի ցուցումը պարունակում է նաև խոսք 71 (պարսկերենից): Աբդուլ-Բահան ասում է, որ Պարան լեռան վրա կնքված պայմանագիրը նշանակում է Բահաուլլայի Կտակը՝ գծված Սուրբ Հողում Գերագույն Գրչով և հրապարակված Նրա համբարձումից հետո: Վերջապես խոսք 79 (պարսկերենից) «թևեր» և «սանր» բառերը նույնպես բնութագրվում են որպես Բահաուլլայի Կտակ: Խոսք 20 և 48 (պարսկերենից) նախադրող տողերում Բահաուլլան հիշատակել է «հինգերորդ Դրախտային Հուշատախտակի» և «Սուտակե Հուշատախտակի» մասին, այնուհետև դրանցից հատվածներ բերել: Աբդուլ-Բահան պարզաբանեց, որ այդ Հուշատախտակները չէին հայտնվել այս աշխարհում և որ դրանք երկուսն էլ պահվում են Աստվածային Արքայությունում: Խոսք 77 (պարսկերենից) «Սադրատուլ-Մունթահա» արտահայտությունը բառացի նշանակում է «ծառ, որից հետո չկա ճանապարհ»: Արաբները, ճանապարհի ուղղությամբ ծառեր տնկելով, վերջին ծառի վրա նշան են դնում, որը ցույց է տալիս, որ էլ ճանապարհ չկա: Հուշատախտակներում այդ անվանումը խորհրդանշան է, որը նշանակում է Աստծու Ավետաբերի դիրքը, որի ըմբռնումը մարդկային բանակության ուժերից վեր է: Բահաուլլայի Սուրբ Գրքերում «երկնային Կույսի» կերպարը ծառայում է որպես բազմանշանակ խորհրդանշան. երբեմն Բահաուլլան կիրառում է այն՝ ինքն իրեն մատնանշելու համար, իսկ այլ դեպքերում Աստծու հատկանիշներից մեկը նշելու համար կամ որպես «Բարձրագույն Հոգու» մարմնավորում: Երկու տառերը, որոնց մասին ասվում է տվյալ խոսքում, «Բահա՛» բառում Բ և Հ տառերն են: Բահաուլլան ասում է, որ միայն երկու տառերն երեքից (Բ, Հ և Ա) հայտնված էին Աստծու Նախախնամությամբ, որ Նրա Հայտնության նշանակությունն ու հզորությունը, խորհրդանշորեն պարունակված Նրա անվան երեք տառերում, լիովին չէին բացահայտվել մարդկությանը: (Նկատենք, որ արաբերեն լեզվում «Բահա՛» բառը, իսկ այն ունի «Լույս», «Փայլատակում», «Փառք» նշանակությունները, բաղկացած է երեք տառերից:)

Նշենք նաև Բահայի կրոնում երեք գլխավոր անձնավորությունների անունների նշանակությունները՝ Բահաուլլա՝ «Աստծու Փառք», Բաբ՝ «Դարպասներ», Աբդուլ-Բահա՝ «Բահայի Ծառա»:

Նվիրական խոսքերը ուղղակի գիրք չէ ընթերցանության համար: Այն գրված է Աստծու անունից և ընծայված մեզ՝ օգնելու յուրաքանչյուրին իր կյանքն ապրել Նրա պատգամներին, հորդորումներին և արգելքներին համապատասխան: Բազմաթիվ մարդիկ մի քանի սերունդներում ընթերցել և վերընթերցել են *Նվիրական խոսքերը*, նրանք իրենց վրա են զգացել, թե ինչպես են այդ աստվածային տեքստերը վեհացնում և վերափոխում մարդկային հոգին:

Կազմված է «*Adib Taherzadeh The Revelation of Baha'u'lla'h, v. 1, George Ronald, Oxford, UK, 1996.*» գրքի նյութերով: